ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրացիոն հոսքերի փոփոխվող դինամիկան ներկայիս աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում

(հետազոտություն)

Տաթևիկ Բեժանյան

Հետազոտությունն իրականացվել է Կարիտաս Ֆրանսիայի ֆինանսավորմամբ «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Ռուսաստանի, Հայաստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի միջև աշխատանքային միգրացիայի հարցերով մասնագիտացած հասարակական կազմակերպությունների անդրազգային ցանցի միավորում» ծրագրի շրջանակներում: Արտահայտված կարծիքներն ու վերլուծությունները պատկանում են միայն հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Կարիտաս Ֆրանսիայի տեսակետները:

Երևան 2024

Նպատակը

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Քովիդ 19-ի, Արցախյան 44-օրյա պատերազմի, ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունների և Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքների ազդեցությունը ՀՀ աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների վրա, ինչպես նաև վեր հանել ՀՀ աշխատանքային միգրանտների խնդիրներն ու կարիքների փոփոխությունը:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ սույն հետազոտությունը նախաձեռնվել է՝ գնահատելու միգրացիոն նոր իրավիճակը գործող միգրացիոն քաղաքականության տեսանկյունից, նոր մարտահրավերները և դրանց արձագանքելու հնարավոր գործընթացը, ինչպես նաև մշակել քաղաքականությունների բարելավման առաջարկներ, որոնք կարող են հեռանկարում պաշտպանել ՀՀ-ից արտագնա աշխատանքի մեկնող միգրանտների իրավունքները և շահերը, ինչպես նաև նպաստել դեպի Ռուսաստան անկանոն միգրացիայի հաղթահարմանն ուղղված քաղաքականության գործողությունների արդյունավետության բարձրացմանը:

Մեթոդաբանությունը

Այս հետազոտության ընթացքում օգտագործվել են հետևյալ հետազոտական մեթոդները.

ա) Երկրորդային ուսումնասիրություն

- Ուսումնասիրվել են վերջին տարիների ՌԴ միգրացիոն օրենսդրության փոփոխությունները, Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում ՌԴ-ի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, դրանց արդյունքում ՀՀ միգրացիոն պատկերի փոփոխությունը: Ուսումնասիրվել են միգրացիոն քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը, առկա ուսումնասիրությունները, վիճակագրական տվյալները, օրենքները և այլն:

բ) Հարցազրույցի մեթոդ

- Հարցազրույցներ միգրանտների հետ. իրականացվել է 33 հարցազրույց ՌԴ մեկնող աշխատանքային միգրացիայի փորձ ունեցող միգրանտների/կամ նրանց ընտանիքի անդամների հետ՝ այդ թվում նրանց հետ, ովքեր այս տարի չեն մեկնել ՌԴ քաղաքական-տնտեսական պայմանների կամ միգրացիոն խստացված քաղաքականության հետևանքով: Հարցումներ են անց կացվել Շիրակի, Երևանի, Լոռու, Արագածոտնի, Վայոց ձորի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի մարզերի և Արցախի միգրանտների շրջանում:

գ) Վիճակագրական վերլուծության մեթոդ

- Սոցիալական ցանցերի միջոցով միգրանտների կողմից բարձրացված հարցերն ընդհանրացվել են, և դուրս են բերվել նշված ժամանակահատվածում ՌԴ-ում հայ միգրանտներին ամենաշատը անհանգստացնող խնդիրները:

Բովանդակություն

Հապավումներ …….....3

Ներածություն …… 4

Միգրացիոն իրավիճակը ՌԴ-ում 5

ՀՀ-ում և ՌԴ-ում օտարերկրացիների աշխատանքային գործունեությունը կարգավորող իրավական մեխանիզմները.....8

Քովիդ19-ի և Արցախյան 44-օրյա պատերազմի ազդեցությունը ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրացիոն հոսքերի վրա……..……..... 14

Ռուս-ուկրաինական պատերազմի և ՌԴ միգրացիոն օրենսդրության խստացումների ազդեցությունը ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրացիոն հոսքերի վրա ……..…….....……. 17

2023թ. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) բնակչության բռնի տեղահանումը, արցախցիների միգրացիոն տրամադրությունները …….. 21

Արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների հետ հարցումների արդյունքները 22

Ամփոփում …… 25

Առաջարկություններ ……...…… 27

Հավելված.....28

Հապավումներ

ԱԱԾ- Ազգային անվտանգության ծառայություն

ԱԺ-Ազգային ժողով

ԱՄԿ-Աշխատանքի միջազգային կազմակերպություն

ԱՄՆ- Ամերիկայի միացյալ նահանգներ

ԱՊՀ-Անկախ պետությունների համագործակցություն

ԱՍՀՆ – Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԴՕ- Դաշնային օրենք

ԵԱՏՄ-Եվրասիական տնտեսական միություն

ԵՄ- Եվրոպական Միություն

ԶԼՄ-Զանգվածային լրատվության միջոցներ

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն

ՀՆԱ- Համախառն ներքին արդյունք

ՄԱԿ-Միավորված ազգերի կազմակերպություն

ՄՍԾ-Միասնական սոցիալական ծառայություն

ՄՔԾ- Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՆԳՆ- Ներքին գործերի նախարարություն

ՌԴ-Ռուսաստանի Դաշնություն

ՍԷԿՏ- Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (համակարգ)

ՓՄՁ-Փոքր և միջին ձեռնակատիրություն

Ներածություն

Հայկական Կարիտաս բարեսիրական ՀԿ-ն Կարիտաս Ֆրանսիայի ֆինանսավորմամբ իրականացնում է «Ռուսաստանի, Հայաստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի միջև աշխատանքային միգրացիայի հարցերով մասնագիտացած հասարակական կազմակերպությունների անդրազգային ցանցի միավորում» ծրագիրը, որի նպատակն է մեկնման և նպատակակետ երկրներում իրականացնել աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների և շահերի պաշտպանություն:

Որակյալ խորհրդատվություն և շահերի պաշտպանություն իրականացնելու համար շատ կարևոր է ուսումնասիրել մեկնման և նպատակակետ երկրների միգրացիոն իրավիճակը, օրենսդրությունը, ձգող և վանող գործոնները, հիմնական խնդիրները, որոնց բախվում են միգրանտները և նրանց ընտանքի անդամները, որոշում կայացնողներին ներկայացնել առաջարկություններ օրենսդրության և միգրանտների իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավման վերաբերյալ:

2020թ.-ից սկսած տեղի ունեցող իրադարձությունները՝ համավարակը, 44-օրյա պատմերազմը, Ռուս-ուկրաինական պատերազմը, ինչպես նաև ՌԴ միգրացիոն օրենսդրության խստացումները, էական ազդեցություն ունեցան ՀՀ-ից մեկնող միգրացիոն հոսքերի վրա: Անկախությունից ի վեր ՀՀ-ից մեկնող միգրացիոն հոսքերը 89-93% միշտ մեկնել են Ռուսաստանի Դաշնություն, իսկ աշխատանքային միգրացիոն հոսքերի մինչև 95-96%-ն է մեկնել ՌԴ: Սա բերել է նրան, որ ՌԴ-ում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն՝ քաղաքական, տնտեսական, միգրացիոն օրենսդրության խստացման էական ազդեցություն է ունենում ՀՀ-ից մեկնող միգրացիոն հոսքերի վրա:

Ուստի անհրաժեշտություն առաջացավ վերլուծելու և գնահատելու վերոնշյալ իրադարձությունների ազդեցությունը ՀՀ-ից մեկնող միգրացիոն հոսքերի վրա, վեր հանելու խնդիրները և առաջարկելու լուծումներ:

Քանի որ ՀՀ-ից մեկնող միգրացիոն հոսքերի հիմնական մասը մեկնում է ՌԴ, ուստի առավել մանրամասն ուսումնասիրել ենք ՌԴ միգրացիոն իրավիճակը, միգրացիոն օրենսդրությունը և վերջին 2 տարիներին իրականացվող քաղաքականությունն ու դրա ազդեցությունը ՀՀ-ից մեկնող միգրանտների վրա:

Միգրացիոն իրավիճակը ՌԴ-ում

ՌԴ-ն հանդիսանում է աշխարհում ամենամեծ թվով միգրանտներ ընդունող երկրներից մեկը: Համաձայն ՄԱԿ-ի 2020թ. տվյալների՝ երկրի բնակչության թվի համեմատ ընդունած միգրանտների թվով ՌԴ-ն 4-րդն է աշխարհում (11,58 մլն մարդ կամ բնակչության 7,9 %) ԱՄՆ-ից (43,43 մլն մարդ կամ բնակչության 13,1 %), Գերմանիայից (14,22 մլն մարդ կամ բնակչության 17,0 %) և Սաուդյան Արաբիայից (13,00 մլն մարդ կամ բնակչության 37,3 %)[1] հետո: 2022թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ՌԴ տարածքում գտնվում էր 5,9 մլն օտարերկրացի, 2021թ.-ին ՌԴ մուտք է գործել 7,3 մլն օտարերկրացի, մեկնել է 5,5 մլն: 2021թ.-ին նկատվել է օտարերկրացիների միգրացիոն հաշվառման դեպքերի աճ 36,6 % կամ 13,3 մլն մարդ: Հիմնական աճը գրանցվել է հունիս-հոկտեմբեր ամիսներին, երբ ամսական ավելի քան 1 մլն մարդ միգրացիոն հաշվառման էր կանգնում: Դա բացատրվում է նրանով, որ Քովիդ 19-ից հետո վերականգնվեցին ավիափոխադրումները մի շարք երկրների հետ, և մուտքի արգելքների մասնակի չեղարկում եղավ:

2021թ.-ին աշխատելու նպատակով ՌԴ մուտք գործած օտարերկրացիների թիվն 2020թ.-ի համեմատ աճել է 8,2 տոկոսային կետով (32,1 %)՝ կազմելով 2 մլն 812 հազ. մարդ: Նրանցից 82,5 հազարն ունեին աշխատանքի թույլտվություն (13,5 %), այդ թվում 44,1 հազարը (28,8 %) բարձր որակավորում ունեցող մասնագետներ էին, 1,9 մլն ուներ պատենտ (68,2 %): Ընդհանուր առմամբ՝ աշխատանքի թույլտվությունները և ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիների աշխատանքի մասին ծանուցումները միասին 2021թ.-ին կազմել են 2 մլն 797,5 հազ:

2021թ.-ի տվյալներով՝ ՌԴ մուտք գործած օտարերկրյա աշխատուժի 77%-ը բաժին է ընկել հետևյալ 3 երկրներին՝ Ուզբեկստան՝ 1 մլն 150,1 հազ (41,1 %), Տաջիկստան՝ 646,1 հազ. (23,1 %) և Ղրղզստան՝ 361,5 հազ (12,9 %): ՀՀ-ից մեկնողները կազմել են 138.9 հազ (5%):

2023թ.-ին միգրացիոն հոսքերը դեպի ՌԴ կտրուկ նվազել են: Ենթադրվում է, որ սա կարող է դառնալ 4-րդ նվազման ալիքը 2000-ականների վերջից սկսած, չնայած այն դեռևս ավելի քիչ է, քան սպասվում էր[2]:

2023թ.-ի 9 ամիսների ընթացքում միգրացիոն հոսքերը նվազել են մինչև 88,6 հազ մարդ: Վերջին 10 տարիների ընթացքում ավելի ցածր հոսքերը եղել են միայն Քովիդ 19-ի ժամանակ, երբ բոլոր սահմանները փակ էին: 2023թ. հոսքի նվազումը պայմանավորված է նախ՝ Ռուս-ուկրաինական պատերազմով և դրա արդյունքում ՌԴ-ի նկատմամբ կիրառված սանկցիաներով, ապա միգրացիոն օրենսդրության խստացմամբ:

2023թ.-ին ամենաշատ աշխատանքային միգրանտները եղել են Ուզբեկստանից (1,6 մլն), Տաջիկստանից (985,5 հազար) և Ղրղզստանից (516,6 հազար): Այս երեք երկրներին միասին բաժին է ընկել «աշխատանքի» նպատակով մուտք գործածների 87%-ը, ՀՀ-ից մեկնողները կազմել են 2.3% (82 420):

2023 թվականի աշնանը Ռուսաստանում միգրացիայի թեման նոր բացասական երանգ ստացավ: Պատճառը Ռուսաստանի տարբեր շրջաններում միգրանտների

[1] https://publications.iom.int/system/files/pdf/WMR-2022.pdf

[2] https://tochno.st/materials/v-2023-godu-pritok-migrantov-v-rossiiu-upal-do-minimalnyx-znacenii-eto-mozet-stat-uze-cetvertoi-volnoi-spada-migracii-s-konca-2000-x-no-poka-ona-mense-cem-ozidalos

կողմից ՌԴ քաղաքացիների նկատմամբ կատարված իրավախախտումների վերաբերյալ ԶԼՄ-ների լուսաբանումներն էին, որոնք բացահայտ սադրիչ բնույթ էին կրում:

Հատկապես մեծ աղմուկ հանեց Մոսկվայի Կարմիր հրապարակում նոյեմբերի 4-ին՝ Ազգային միասնության օրը, ոստիկանների և նրանց վիրավորող կենտրոնական Ասիայից եկած միգրանտների միջև տեղի ունեցած ծեծկռտուքը:

Չնայած այս ամենին, «Հասարակական կարծիքի ուսումնասիրության համառուսական կենտրոնի» հարցումներով՝ ռուսաստանցիների վերաբերմունքը միգրանտների նկատմամբ դրականորեն փոխվել է: 2023թ.-ի ամռանը ռուսաստանցիների 47% կարծում էին, որ աշխատանքային միգրացիան դրական երևույթ է ՌԴ-ում (2014 թ.-ին եղել է 14%), ընդ որում երիտասարդների շրջանում այդ տոկոսն առանձնակի բարձր է (61% 18-24 տարեկանների մոտ): Բացասական են գնահատում աշխատանքային միգրացիան ռուսաստանցիների 40%, ինչը գրեթե 2 անգամ ավելի քիչ է, քան 10 տարի առաջ (74%)[3]:

Մյուս կողմից, եթե հաշվի առնենք ստեղծված արտաքին և ներքին իրավիճակը, որում հայտնվել է ՌԴ-ն Ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով, այսպես կոչված «միգրանտների ամենաթողության» հետևում կարելի է տեսնել «Միգրացիայի խաղաքարտը» խաղարկելու փորձ, որի նպատակն է հրահրել բռնկում երկրի ներսում: Այս տեսության օգտին է խոսում այն հանգամանքը, որ միգրանտների «պրովոկացիոն ագրեսիվության» թիրախ են հանդիսանում իրավապահ մարմինների աշխատակիցները, իսկ սոց.ցանցերում ընդգծվում է հանցագործության էթնիկ և կրոնական բնույթը, և ՌԴ-ում իրավիճակի ապակայունացումը:

Ամեն դեպքում, տեղեկատվական այս ալիքը միգրանտների աճող հանցավորության մասին, հասարակությանը վերադարձրեց ՌԴ-ում աշխատանքային միգրացիայի նպատակահարմարության թեմային:

Կրկին և՛ հասարակության, և՛ պաշտոնատար անձանց շրջանում բռնկվեցին բանավեճեր՝ պետք են արդյոք ՌԴ-ին աշխատանքային միգրանտները, հատկապես ցածր որակավորում ունեցող և ռուսերենին վատ տիրապետող Կենտրոնական Ասիայից եկողները, ինչ պայմանների առկայության դեպքում կարելի է աշխատաշուկա թողնել Ուզբեկստանից և Տաջիկստանից եկողներին, ինչ անել մասշտաբային չգրանցված օտարերկրյա աշխատուժի հետ և այլն:

Սրա հետ կապված՝ արժե օբյեկտիվորեն գնահատել Ռուսաստանի աշխատաշուկայում տիրող իրավիճակը և Ռուսաստանին աշխատանքային ռեսուրսներ մատակարարող հիմնական երկրներում՝ Կենտրոնական Ասիայի պետություններում տիրող տրամադրությունները միգրացիայի վերաբերյալ:

ՌԴ Ներքին գործերի նախարար Վլադիմիր Կոլոկոլցևը 2024թ. ապրիլին գերատեսչական կոլեգիայի ընդլայնված նիստում հայտնել էր, որ 2023 թվականին Ռուսաստանից արտաքսված միգրանտների թիվը եղել է ռեկորդային: Խոսքը գրեթե 110 000 օտարերկրացիների մասին է, ովքեր անօրինական կերպով գտնվել են ՌԴ-ում: Սա 65 %-ով ավելի է, քան մեկ տարի առաջ: Կոլոկոլցևը հավելել էր, որ Ռուսաստանում միգրանտների ժամանակավոր գտնվելու ժամկետը կրճատելու վերաբերյալ 35 000 որոշում է կայացվել, իսկ անօրինական միգրացիայի կազմակերպման բացահայտված

[3] https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/trudovaya-migratsiya-v-rossiyu-vzglyad-cherez-prizmu-politicheskikh-ekonomicheskikh-i-demografichesk/

փաստերի թիվն աճել է 90%-ով: Սակայն, ըստ ՆԳՆ ղեկավարի, ընդհանուր առմամբ միգրանտների կողմից կատարված հանցագործությունների տեսակարար կշիռը նվազել է[4]:

2024թ. առաջին կիսամյակի ընթացքում երկրից արտաքսված միգրանտների թիվը կազմել է 65 000, 120 000 միգրանտ մուտքի արգելք է ստացել, համեմատության համար ողջ 2023թ.-ի ընթացքում մուտքի արգելք ստացել է 170 000 միգրանտ[5]:

Միգրանտների նկատմամբ խստացվող քաղաքականությունը պաշտպանում են բոլոր պետական օղակներում, անգամ Օմբուդսմենի գրասենյակում, ավելին՝ խստացումները շարունակվում են:

2025 թվականից աշխատանքային միգրանտների համար պետք է գործարկվի վերահսկվող անձանց ռեեստր[6], որտեղ ներառված անձանց նկատմամբ կարող է կիրառվել գտնվելու վայրի պարզում տեխնիկական միջոցների կիրառմամբ, այդ թվում գեոլոկացիայի միջոցով, ՆԳՆ աշխատակիցների կողմից տարածք կամ բնակության վայր մուտք գործելու միջոցով, որտեղ ենթադրաբար պետք է գտնվի միգրանտը (անհրաժեշտության դեպքում հաղթահարելով դիմադրությունը), ցանկացած փաստաթղթերի ստուգում իրականացնել, այդ թվում հարկային և բանկային գաղտնիք պարունակող:

Ներքին գործերի նախարարության տվյալներով՝ Ռուսաստանում ներկայումս գտնվում է մոտ 630 հազար անօրինական միգրանտ: Նրանց երկրից հեռանալը խրախուսելու համար կառավարությունը նախատեսում է 2025 թվականից գործարկել վերահսկվող անձանց ռեեստր: Այնուամենայնիվ, դրա պարամետրերը նկարագրող կարգավորող փաստաթղթեր դեռևս չկան, բացի այդ, դրա մեջ մուտքագրվող տեղեկատվության ծավալը նվազեցնելու համար կառավարությունը քննարկում է նախնական համաներումը որոշ օտարերկրացի իրավախախտների համար[7]:

Մյուս կողմից ՌԴ-ն փորձում է միգրանտներին հակել՝ մասնակցելու Ռուս-ուկրաինական պատերազմին:

2023 թվականի փետրվարի 27-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հրամանագիր է ստորագրել, ըստ որի օտարերկրացիների հետ զինվորական ծառայության առաջին պայմանագիրը կկնքվի մեկ տարով: Փաստաթուղթը հրապարակվել է իրավական տեղեկատվության պաշտոնական ինտերնետային պորտալում[8]:

Փորձ է արվում զինվորական ծառայության մղել նաև քրեական պատասխանատվության ենթարկված անձանց:

23.03.2024թ. նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել է Դումայի կողմից ընդունված օրենքը հանցանք կատարած կամ պատիժ կրող անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու մասին, եթե նրանք զորակոչվել են զինվորական ծառայության զորահավաքի կամ պատերազմի ժամանակ կամ պայմանագիր կնքելիս[9]:

---

[4] https://govoritmoskva.ru/news/405045/

[5] https://www.gazeta.ru/social/news/2024/07/13/23456935.shtml

[6] http://kremlin.ru/acts/news/74734

[7] https://www.kommersant.ru/doc/6920727

[8] https://news.rambler.ru/army/50283928-god-vmesto-pyati-putin-podpisal-ukaz-o-sluzhbe-inostrantsev-v-armii-rf/

[9] https://www.garant.ru/news/1668173/

2024թ. հուլիսի 30-ին իրավական ակտերի նախագծերի պորտալում հայտնվեց մի փաստաթուղթ, ըստ որի ՌԴ Ներքին գործերի նախարարությունն առաջարկել է պարզեցնել ՌԴ քաղաքացիության ձեռքբերումը ռուսաստանցիների հարազատների համար, ովքեր հատուկ գործողության ընթացքում պայմանագիր են կնքել զինված ուժերի հետ[10]:

Ներկայումս այս միջոցը գործում է միայն օտարերկրացի պայմանագրայինների համար: Նրանց երեխաները, ամուսինները և ծնողները կարող են դիմել Ռուսաստանի քաղաքացիություն ստանալու համար՝ առանց մի շարք պահանջների: Խոսքը ռուսերենի իմացության, Ռուսաստանում հինգ տարի մշտական բնակության և երկրի պատմության ու օրենսդրության հիմունքների իմացության մասին է:

Միևնույն ժամանակ 2024թ օգոստոսին ՌԴ Պետդուման սկսեց քննարկել նոր օրինագիծ, որով կարգելվի միգրանտներին ՌԴ բերել իրենց ընտանիքի անդամներին, եթե ընտանիքի այդ անդամները չունեն ՌԴ քաղաքացիություն:

ՀՀ-ում և ՌԴ-ում օտարերկրացիների աշխատանքային գործունեությունը իրավական կարգավորող մեխանիզմները

Աշխատելու նպատակով ՌԴ մուտք գործող օտարերկրացիները, որպեսզի ՌԴ-ում կարողանան աշխատել մուտքի պահին սահմանին լրացվող միգրացիոն քարտում այցի նպատակը պետք է նշեն «աշխատանք»: Աշխատանքից բացի այլ բան նշելու դեպքում որպեսզի կարողանան աշխատել պետք է սահման հատեն, նորից մուտք գործեն և այցի նպատակը նշեն «աշխատանք»:

ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները մուտքի պահից 30-օրյա ժամկետում (ոչ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները 7 աշխատանքային օրվա ընթացքում) պետք է իրենց իրական բնակության հասցեում միգրացիոն հաշվառման կանգնեն (հաշվառման բացակայության դեպքում անձի գտնվելը ՌԴ-ում համարվում է անօրինական և պատժվում է մուտքի արգելքով՝ 3-10 տարի ժամկետով):

Օտարերկրացիները ՌԴ-ում աշխատելու համար պետք է ստանան աշխատանքի թույլտվություն[11]:

Ներկայումս Ռուսաստանում կան թույլտվությունների **երեք** հիմնական տեսակ, որոնք սահմանում են ժամանակավոր աշխատանքային միգրացիայի **չորս** հիմնական ուղիները: Այս ուղիները զգալիորեն տարբերվում են հոսքերի մասշտաբով և աշխատանքային միգրանտների կազմով:

1. **Առաջին** տեսակը սովորական աշխատանքի թույլտվությունն է, որը բաղկացած է երկու կատեգորիայից՝
   - ✓ տրամադրված տարեկան սահմանված քվոտայի շրջանակներում,
   - ✓ տրամադրված առանց քվոտայի՝ որոշակի մասնագիտությունների ներկայացուցիչներին, որոնց ցանկը ամեն տարի հաստատում է Աշխատանքի նախարարությունը (այսպես կոչված «որակավորված մասնագետներ»),

[10] https://www.pnp.ru/social/rodnym-rossiyan-kontraktnikov-stanet-proshhe-poluchit-grazhdanstvo-rf.html
[11] https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_37868/c137c6f66afe76bc2b195f1d1743662a5fc3d372/

2. Աշխատանքային թույլտվությունների **երկրորդ** տեսակը տրվում է առանց քվոտաները հաշվի առնելու, այսպես կոչված բարձր որակավորում ունեցող մասնագետներին:
3. Փաստաթղթերի **երրորդ** տեսակը արտոնագիրն է (պատենտ), որը օտարերկրյա քաղաքացուն իրավունք է տալիս աշխատել ֆիզիկական կամ իրավաբանական անձի մոտ՝ տրվում է ՌԴ առանց վիզայի մուտք ունեցող երկրների քաղաքացիներին: Արտոնագիր ունեցող օտարերկրյա քաղաքացին իրավունք ունի աշխատանքային գործունեություն ծավալել բացառապես Ռուսաստանի Դաշնության այն սուբյեկտի կազմում, որի տարածքում նրան տրվել է արտոնագիր, դրանում նշված մասնագիտությամբ (մասնագիտություն, պաշտոն, աշխատանքային գործունեության տեսակ):

Աշխատանքային միգրացիայի **չորրորդ** տեսակը ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիների համար է: Նրանցից թույլտվական բնույթի փաստաթուղթ չի պահանջվում ՌԴ-ում աշխատանքային գործունեությամբ զբաղվելու համար, բավական է ունենալ աշխատանքային կամ քաղ.իրավական պայմանագիր:

Օտարերկրացիները (այդ թվում ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները) աշխատանքային գործունեություն իրականացնելու համար բացի վերոնշյալից պետք է նաև անցնեն մատնահետքի /дактилоскопия/ հանձնում և լուսանկարում և պարտադիր բժշկական զննություն՝ համաձայն Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքի փոփոխությունների, ուժի մեջ մտած 2021թ. նոյեմբերի 29-ին[12]:

Բուժզննում անցնում և մատնահետք հանձնում են՝

- Աշխատելու նպատակով ՌԴ մուտք գործող օտարերկրացիները (ովքեր միգրացիոն քարտում այցի նպատակը նշել են «աշխատանք»),
- 90 օրից ավել ժամկետով և ոչ աշխատանքային նպատակով ՌԴ մեկնողները՝ այդ թվում աշխատանքային միգրանտների ընտանիքի անդամները,
- 6 տարեկանից բարձր երեխաները:

Մատնահետքի հանձնումը և լուսանկարումը իրականացվում է ՌԴ ներքին գործերի մարմինների կողմից մեկ անգամ՝ առանց պետական տուրքերի գանձման՝ անկախ ՌԴ մուտքի/ելքի քանակից: Տրվում է պլաստիկ քարտ 10 տարի ժամկետով:

Բուժզննումն իրականցնում է ՌԴ յուրաքանչյուր սուբյեկտում առանձին հաստատված բժշկական կազմակերպություն: Տրված փաստաթղթի ժամկետը 1 տարի է, արժեքը սահմանում է բուժհաստատությունը:

Բուժզննման արդյունքում վտանգավոր վարակիչ հիվանդություններ կամ թմրամոլություն հայտնաբերելու դեպքում օտարերկրացուն ճանաչում են անցանկալի և ցմահ արգելում նրա մուտքը ՌԴ:

[12] https://www.garant.ru/products/ipo/prime/doc/401315604/

Պարտադիր դակտիլոսկոպիկ հաշվառում և լուսանկարում և բուժզննում չանցած օտարերկրացիների վերաբերյալ կայացվում է ՌԴ ում գտնվելու ժամկետի կրճատման վերաբերյալ որոշում:

Վերոնշյալ որոշման և միգրացիոն հարցերի տարածքային մարմին ներկայանալու մասին անձին տեղյակ են պահում մեկ օրվա ընթացքում հեռախոսազանգի, էլ.փոստի կամ սովորական փոստի միջոցով:

Միաժամանակ օտարերկրացուն տեղյակ են պահում, որ նա պետք է լքի ՌԴ տարածքը ՌԴ-ում գտնվելու ժամկետի կրճատման վերաբերյալ որոշման կայացման օրվանից 3 օրվա ընթացքում:

ՌԴ տարածքից չհեռանալու, ՌԴ տարածքը չլքելու դեպքում անձը կենթարկվի վարչական պատասխանատվության՝ վարչական տուգանքի և ՌԴ տարածքից արտաքսման տեսքով, նրա մուտքը ՌԴ կարգելվի 5 տարի ժամկետով:

Աշխատանքային միգրանտների համար կնքվում է պարտադիր բժշկական ապահովագրություն:
Շտապ բժշկական օգնությունը, որն անհրաժեշտ է դարձել հանկարծահաս հիվանդությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների, թունավորումների դեպքում, անվճար է և կապ չունի անձը ՌԴ-ում օրինական է գտնվում, ունի բժշկական ապահովագրություն թե ոչ (սովորաբար առաջին օգնությունը նման դեպքերում տրամադրում են հրշեջները, փրկարարները և շտապ օգնության բրիգադները)*:*
Շտապ բժշկական օգնությունը բժշկական հաստատությունների կողմից քաղաքացիներին տրամադրվում է հանկարծահաս հիվանդությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների, թունավորումների և անհապաղ բժշկական միջամտություն պահանջող այլ պայմանների դեպքում (բժիշկները հիվանդին բերում են կայուն վիճակի, բայց հետագա բուժումը հնարավոր է իրականացնել միայն բժշկական ապահովագրության առկայության կամ ծառայությունների դիմաց վճարի դեպքում):

2023թ. հունվարի 1-ից ԵԱՏՄ անդամ երկրների այն քաղաքացիները, որոնք ՌԴ են ժամանել 90 օրվանից ավելի ժամկետով, իրավունք են ձեռք բերում փոխել ժամանելու նպատակը «աշխատանք»-ով՝ առանց ՌԴ-ից մեկնելու:

Նպատակը փոխելու դեպքում նրանք պարտավոր են հանձնել մատնահետք և անցնել բուժզննություն ու կնքել աշխատանքային պայմանագիր ժամանելու նպատակը փոխելու ամսաթվից 30 օրվա ընթացքում:

Ովքեր չեն հասցնի այցի նպապատկը փոխելուց հետո կատարել վերոնշյալ գործողությունները, նրանց կացության ժամկետը կկրճատվի և կճանաչվեն անցանկալի:

Չի՛ կարելի փոփոխել ժամանելու նպատակը ոչ աշխատանքով:

Չի՛ կարելի փոփոխել ժամանելու նպատակը աշխատանքից այլ նպատակի:

Չի՛ կարելի փոփոխել ժամանելու նպատակը նրանց, ովքեր ժամանել են 90 օրվանից պակաս ժամկետով:

Չի կարելի փոփոխել ժամանելու նպատակը, եթե միգրացիոն հաշվառման ավարտին մնացել է 30-ից պակաս ժամանակ:

ՀՀ-ում օտարերկրացիների աշխատանքի մեխանիզմները.

ՀՀ-ում որպեսզի օտարերկրացիները կարողանան աշխատել, պետք է ունենան կամ օրինական բնակություն՝ կացության կարգավիճակ (ՌԴ քաղաքացիները կարող են առանց կացության կարգավիճակ ստանալու ՀՀ ում բնակվել նաև այն դեպքում, երբ հաշվառվում են ըստ բնակության վայրի և անձնագրում առկա է լինում հաշվառման փաստը հավաստող կնիք), ՀՀ-ում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ, ՀՀ-ում ճանաչված լինեն փախստական կամ ՀՀ-ում ապաստան հայցող լինեն կամ ստանան աշխատանքի թույլտվություն:

ՀՀ-ում աշխատանքի թույլտվության գործընթացն իրականացվում է https://workpermit.am/am/home [13] կայքի միջոցով:

Օտարերկրացին դիմում է գործատուին՝ մեկ պատուհանով աշխատանքի թույլտվության և կացության ժամանակավոր կարգավիճակը հավաստող փաստաթուղթ ստանալու գործընթացը կազմակերպելու համար[14]:

Գործատուն գրանցվում է էլեկտրոնային հարթակում: Գրանցվելու համար գործատուն անցնում է խիստ նույնականացում:

Հարթակում գրանցվելուց և մուտք գործելուց հետո գործատուն ստեղծում է թափուր աշխատատեղի նոր նկարագիր: Նկարագրի ստեղծման ընթացքում հարթակն առաջարկում է ընտրել երկու տարբերակներից մեկը՝ա. «Աշխատանքի թույլտվություն», բ. «Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառություններ».

Ընտրվում է «Աշխատանքի թույլտվություն» տարբերակը և համապատասխան դաշտում լրացվում է առաջարկվող աշխատատեղի և (կամ) պաշտոնի նկարագիրը:

Նկարագիրը ավտոմատ եղանակով ուղարկվում է ՀՀ ԱՍՀՆ (ՄՄԾ): 15 աշխատանքային օրվա ընթացքում հարթակում նկարագրի վերաբերյալ կատարվում է նշում:

Եթե հարթակում կատարվում է հետևյալ նշումը՝ «Թափուր աշխատատեղը կարող է լրացվել օտարերկրյա քաղաքացիով», գործատուն 3 աշխատանքային օրվա ընթացքում հարթակում մուտքագրում է օտարերկրացու տվյալները:

Գործատուի կողմից օտարերկրացու տվյալները մուտքագրելուց հետո ՀՀ ԱԱԾ-ի և ոստիկանության համապատասխան օպերատորները ինքնաշխատ եղանակով ստանում են ծանուցում՝ հարթակ մուտքագրված օտարերկացու տվյալների վերաբերյալ: ՀՀ ԱԱԾ-ն և ոստիկանությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնում են եզրակացություն՝ օտարերկրացուն հայցվող կարգավիճակի տրամադրման վերաբերյալ:

Եթե նշված ժամկետում ՀՀ ԱԱԾ-ն և ոստիկանությունը եզրակացություն չեն տալիս, ապա եզրակացությունը համարվում է դրական:

Ստացված եզրակացությունների հիման վրա Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը կայացնում է որոշում՝ տրամադրում է կացության քարտը կամ կայացնում մերժման որոշում:

---

[13] https://workpermit.am/am/home

[14] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=151076

Ընթացակարգը աշխատանքի թույլտվության բացառության հիմքով՝
Օտարերկրացին դիմում է գործատուին՝ մեկ պատուհանով աշխատանքի թույլտվության և կացության ժամանակավոր կարգավիճակը հավաստող փաստաթուղթ ստանալու գործընթացը կազմակերպելու համար:
Գործատուն գրանցվում է էլեկտրոնային հարթակում : Գրանցվելու համար գործատուն անցնում է խիստ նույնականացում:
Հարթակում գրանցվելուց և մուտք գործելուց հետո գործատուն ստեղծում է թափուր աշխատատեղի նոր նկարագիր: Նկարագրի ստեղծման ընթացքում հարթակն առաջարկում է ընտրել երկու տարբերակներից մեկը՝
ա. «Աշխատանքի թույլտվություն», բ. «Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառություններ».
Ընտրվում է «Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառություններ» տարբերակը, համապատասխան դաշտում լրացվում է առաջարկվող աշխատատեղի և (կամ) պաշտոնի նկարագիրը, այնուհետև ընտրվում համապատասխան բացառությունը՝ կցելով օտարերկրացու ընտրված բացառությանը համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը:
Հարթակն ինքնաշխատ եղանակով հայտն ուղարկում է համապատասխան լիազոր մարմին, որը 5 աշխատանքային օրվա ընթացքում հարթակի միջոցով տրամադրում է գրավոր եզրակացություն՝ օտարերկրացու նշված բացառությանը համապատասխանության վերաբերյալ:
Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը հարթակի միջոցով ստանում է համապատասխան լիազոր մարմնի դրական եզրակացությունը, որից հետո հարթակն ինքնաշխատ եղանակով հայտն ուղարկում է ՀՀ ԱԱԾ և ոստիկանության օպերատորներին:
ՀՀ ԱԱԾ-ն և ոստիկանությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնում են գրավոր եզրակացություն՝ օտարերկրացուն ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ:
ՀՀ ԱԱԾ-ից և ոստիկանությունից համապատասխան եզրակացություններն ստանալուց հետո Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը կայացնում է որոշում՝ ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:
Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել[15]՝
ա) ՀՀ-ում մշտական և հատուկ կացության կարգավիճակ ունեցողները, ինչպես ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելու հիմքերով ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները.
բ) ՀՀ- ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը.
գ) ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների և դրանց

[15] https://www.arlis.am/documentview.aspx?docid=30348

ներկայացուցչությունների աշխատակիցների ընտանիքի անդամները՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա.
դ) մերձսահմանային շրջանների աշխատողները, ինչպես նաև կարճ ժամկետով ժամանող մշակութային և սպորտային մասնագիտություն ունեցող անձինք.
ե) օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հիմնադիրները, տնօրենները կամ լիազորված ներկայացուցիչները.
զ) օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների աշխատակիցները ՀՀ-ում տեղակայված այդ կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատելու նպատակով.
է) օտարերկրյա առևտրային կազմակերպության կողմից իր մասնաճյուղ կամ ներկայացուցչություն առաքվող կամ օտարերկրյա առևտրային կազմակերպություններից գնված մեքենաները, սարքավորումները, հաստոցները տեղադրելու, վերանորոգելու և դրանք շահագործելու համար աշխատողներին որակավորելու նպատակով 6 ամսից ոչ ավել ժամկետով ժամանող օտարերկրյա մասնագետները.
ը) ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագետները կամ այլ անձինք.
թ) ՀՀ ուսումնական հաստատություններում դասախոսություններ կարդալու նպատակով հրավիրված օտարերկրյա ուսումնական հաստատությունների դասախոսները.
ժ) լրատվական գործունեություն իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների հավատարմագրված ներկայացուցիչները.
ժա) փախստականի կարգավիճակ ունեցող, ՀՀ-ում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.
ժբ) համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա արձակուրդների ժամանակ աշխատանքային փոխանակումների շրջանակներում աշխատանք կատարող ուսանողները:

ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու համար աշխատանքի թույլտվության կարիք չունեն: Նրանց համար սահմանվում է այլ ռեժիմ՝ https://workpermit.am կայքում գրանցում են իրենց աշխատանքային պայմանագիրը և իրենց ու իրենց ընտանիքի անդամների համար ստանում են **Հայաստանի Հանրապետությունում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք, որն անվճար է:**

Աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրացու կողմից կոնկրետ գործատուի մոտ կոնկրետ աշխատանք կատարելու փաստը ենթակա է մշտադիտարկման: Սահմանված ժամկետում համակարգը ավտոմատացված իրականացնում է ստուգում ՀՀ ՊԵԿ-ի տվյալների շտեմարանի հետ՝ աշխատանքի թույլտվություն ունեցող օտարերկրացու կողմից վճարված եկամտային հարկի մասով: Եթե հայտնաբերվում է, որ պայմանագրում նշված աշխատավարձի չափին համապատասխան եկամտային հարկեր չեն վճարվել, ապա միգրացիոն ծառայությունը գրավոր ծանուցում է օտարերկրացուն և գործատուին՝ աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու մտադրության մասին:

Աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու որոշում ընդունելու մտադրության մասին գործատուին և օտարերկրացի աշխատողին տեղեկացնելուց

հետո՝ սահմանված ժամկետում պարզաբանումներ չստանալու դեպքում միգրացիոն ծառայությունն աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու որոշման նախագիծը ներկայացնում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին՝ դիրքորոշում ստանալու համար: Աշխատանքի թույլտվությունը համարում է ուժը կորցրած: Համակարգը ավտոմատացված այդ մասին տեղեկացնում ՀՀ ԱԱԾ-ին և ՀՀ ոստիկանությանը:

Աշխատանքի թույլտվության ժամկետը լրանալուց և նոր թույլտվություն չստանալու դեպքում համակարգն ավտոմատ ստուգում է օտարերկրացու՝ ՀՀ-ում բնակվելու հանգամանքը՝ կապ հաստատելով ՀՀ ԱԱԾ ՍԷԿՏ համակարգի հետ: Եթե օտարերկրացին լքել է ՀՀ տարածքը, ապա գործը փակվում և հեռացվում է համակարգից: Եթե օտարերկրացին չի հեռացել ՀՀ-ից, ապա համակարգն ավտոմատացված կարգով ստուգում է ՀՀ-ում բնակվելու այլ իրավական հիմքերի ձեռքբերման հանգամանքը՝ կապ հաստատելով ՀՀ բնակչության պետական ռեգիստրի հետ: Եթե օտարերկրացին չի ստացել համապատասխան կացության կարգավիճակ կամ օրինական բնակվելու այլ հիմք, ապա համակարգն ավտոմատ ծանուցում է ՀՀ ԱԱԾ-ին և ՀՀ ոստիկանությանը խախտման մասին: Կարող են նախատեսվել հսկողական այլ մեխանիզմներ ևս:

Ի տարբերություն այլ հիմքերի ՀՀ-ում աշխատանքի թույլտվության հիմքով կացության կարգավիճակ ստանալիս պարտադիր բուժզննում նախատեսված չէ[16]:

Քովիդ 19-ի և Արցախյան 44-օրյա պատերազմի ազդեցությունը ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրացիոն հոսքերի վրա

2020թ. սկսված համավարակի արդյունքում ամենատուժածներից են համարվում աշխատանքային միգրանտները, մասնավորապես կարճաժամկետ, սեզոնային միգրանտները: Սեզոնային աշխատանքային միգրացիան սկսվում է հիմնականում մարտ ամսից: Աշխատանքային միգրանտների 95-96%-ը մեկնում են ՌԴ (ՀՀ-ից մեկնող էմիգրացիոն հոսքերի մեջ 93%-ը կազմում են աշխատանքային միգրանտները)[17]: Մարտից սկիզբ առած կանխարգելիչ միջոցառումները, որոնց թվում էր նաև սահմանների փակումը, զրկեցին սեզոնային աշխատանքային միգրանտերին մեկնել արտագնա աշխատանքի, իսկ նրանք, ովքեր արդեն մեկնել էին ՌԴ կամ գտնվում էին ՌԴ-ում, դարձան գործազուրկ, քանի որ ձեռնարկությունները դադարեցրին իրենց գործունեությունը: ՌԴ-ում գտնվող ՀՀ քաղաքացիների մի մասը սկսեց ուղիներ որոնել վերադառնալու ՀՀ, հատկապես մանկահասակ երեխաներ ունեցող ընտանիքները:

Էականորեն տուժեցին աշխատանքային միգրանտների ընտանիքների անդամները, որոնց միգրանտ ընտանիքի անդամն արդեն մեկնել էր և փակ ճանապարհների պատճառով չէր կարողանում վերադառնալ, իսկ աշխատանքի բացակայության արդյունքում չէր կարողանում գումար ուղարկել: ՀՀ-ում գտնվող ընտանիքի

[16] Սա խնդիր է, քանի որ աշխատանքի թույլտվություն ստացողների մեջ գերակշռում են Հնդկաստանի քաղաքացիները, իսկ Հնդկաստանը տուբերկուլյոզով հիվանդության դեպքերի թվով առաջինն է աշխարհում: ՀՀ-ում վերջին 1.5 տարվա ընթացքում Հնդկաստանի 6 քաղաքացի մահացել է տուբերկուլյոզից:

[17] «Հայաստանի արտաքին միգրացիայի գնահատումը», հայ-ռուսական համալսարան, 2019

անդամները, փաստացի զրկված լինելով կենսապահովման միջոցներից, հայտնվեցին շատ ծանր կացության մեջ:

2020թ. ՀՀ կառավարությունը հայտարարեց համավարակի հետևանքների չեզոքացման միջոցառումների համար 150 միլիարդ դրամ (մոտ 300 միլիոն ԱՄՆ դոլարի) տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ կառավարության կողմից հաստատվեց աջակցության 22 ծրագիր, որոնցից 9-ը տնտեսական հետևանքների չեզոքացման համար, 13-ը՝ սոցիալական հետևանքների չեզոքացման համար:

Տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերը նախատեսված էին՝ աջակցելու ռեզիդենտ տնտեսվարողներին, որոնք ունեին բարվոք վարկային և հարկային պատմություն՝ համաֆինանսավորման, վերաֆինանսավորման, սուբսիդավորման միջոցով, ՓՄՁ-ներին վարկերի տրամադրման ձևով, միկրոձեռնարկություններին միանվագ աջակցության տեսքով, բարձր տեխնոլոգիաների ոլորտին միանվագ դրամաշնորհների տրամադրմամբ, «զրոյից» բիզնես սկսողներին արտոնյալ վարկերի տրամադրմամբ, գյուղատնտեսությամբ զբաղվողներին, ինչպես անհատ, այնպես էլ կոոպերատիվներին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, կոոպերատիվներին նաև համաֆինանսավորման (այդ թվում՝ լիզինգի) ձևով և տնտեսվարողներին արդյունավետ աշխատատեղերի պահպանման աջակցությամբ:

Սոցիալական ծրագրերով միանվագ աջակցություն է տրամադրվել մինչև 14 տարեկան երեխա ունեցող ընտանիքներին, որտեղ ծնողը կորոնավիրուսի պատճառով կորցրել է աշխատանքը, հղի կանանց, ում ամուսինը կորցրել է աշխատանքը, 0-18 տարեկան երեխա ունեցող ընտանիքներին, որտեղ երկու ծնողն էլ չունի գրանցված աշխատանք, 2020 թվականի մարտի 31-ից մինչև հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատված և նույն ժամանակահատվածում մեկ այլ աշխատանքի չանցած անձանց:

Այս ծրագրերի մասնակիցներից քանիսն են եղել աշխատանքային միգրանտ, հնարավոր չի եղել պարզել, քանի որ այդպիսի չափորոշիչ դրված չի եղել: Սոցիալական նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների միայն 16% դեպքում է նշված արտագնա աշխատանքի մեկնող ընտանիքի անդամի առկայությունը:

Թերևս ամենահավանական սոցիալական աջակցության ծրագիրը, որին հնարավոր է, որ աշխատանքային միգրանտներ ընդգրկված լինեին, Տասնհինգերորդ միջոցառումն էր՝ բնապահպանական խնդիրներ լուծելու միջոցով գյուղատնտեսական ոլորտում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում: Ծրագրին կարող էին մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր կմասնակցեին «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության բարձրադիր գոտիներում գետերի ափապաշտպան անտառաշերտերի հիմնման աշխատանքներին, ինչի համար կստանային համապատասխան վճար:

2020թ. հունիսից կառավարության որոշմամբ մեկնարկեց կորոնավիրուսի պատճառով արտագնա աշխատանքի մեկնել չկարողացած կամ ՀՀ վերադարձած աշխատանքային միգրանտներին լայնածավալ շինարարական աշխատանքներում ընդգրկելու

ծրագիրը: Այս նպատակով մարզպետարաններում գրանցել էին ավելի քան 10 377 արտագնա աշխատանքի մեկնել չկարողացած կամ վերդարձած աշխատանքային միգրանտներ, որոնցից 970 -ին (9.3 %) է հաջողվել ներգրավվել ծրագրում:
Այս ծրագրերը դադարեցին գործել 2020թ. սեպտեմբերի վերջին, քանի որ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը հարձակում գործեց Արցախի վրա, սկսվեց Արցախյան 2-րդ պատերազմը, որը տևեց 44 օր: Քովիդյան բոլոր սահմափակումներն սկսվեցին անտեսվել, քանի որ մարդիկ կա՛մ մեկնում էին պատերազմ, կա՛մ աշխատում էին՝ օգնելու պատերազմում գտնվողներին, կա՛մ ընդունում էին Արցախից եկած փախստականներին:

2020թ. սեպտեմբերի 27-ից 2021թ մարտի 24-ը Հայաստանում և Արցախում հայտարարվեց ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք[18]:

Հայտարարվեց պահեստազորի սպայական, ենթասպայական և շարքային կազմի մինչև 55 տարեկան պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչ:

Սահմանվեց ՀՀ տարածք մուտքի և ելքի հատուկ ռեժիմ: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը կարող էին անձանց արգելել ՀՀ մուտք գործելը (բացառությամբ ՀՀ քաղաքացիների) և ՀՀ-ից դուրս գալը՝ պետական անվտանգության, մարդկանց կյանքի և անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված:

ՀՀ ԱԺ-ն ռազմական դրությունը վերացնելու մասին որոշում ընդունեց 2021թ մարտի 24-ին:
Այս 2 իրադարձություններն էական ազդեցություն ունեցան ՀՀ միգրացիոն հոսքերի վրա:
2021թ.-ի մարտից կտրուկ աճեց ՀՀ-ից դեպի ՌԴ միգրացիոն շարժը:

Տարի (*01.01-31.12*)	Միգրացիոն հաշվառման է կանգնել[19]	Միգրացիոն հաշվառումից հանվել է	Մուտք՝ աշխատելու նպատակով	Աշխատանքային/ քաղ.իրավական պայմանագրի առկայություն	Քաղաքացիության ձեռք բերում
2019	**634 336**	**469 237**	**210 000**	**Բազայում տվյալ առկա չէ**	**24 024**
2020	**364 581**	**321 636**	**69 024**	**-**	**30 538**
2021	**578 779**	**426 254**	**389 809**	**138 946**	**46 931**

Թվերի այս աճը պայմանավորված է 2 հիմնական պատճառով, նախ Կովիդի ընթացքում ՀՀ տեղափոխվեցին ոչ միայն սեզոնային աշխտանքային միգրանտները, այլ նաև 1 տարի և ավելի ժամկետով ՌԴ-ում աշխատող միգրանտները, որոնք նախորդ տարիների ելքի-մուտքի բազաներում չէին երևում և 2020թ. դեպի Հայաստան ՀՀ

[18] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=148107

[19] Միգրացիոն հաշվառում սյունակում ներկայացված է ՌԴ-ում օրինական 30 օրից ավել գտնվող ՀՀ քաղաքացիների թիվը (հեղ.)

քաղաքացիների աննախադեպ հոսքը, արդեն իսկ 2021թ. առաջին կիսամյակին վերածվեց աննախադեպ արտահոսքի: Հաջորդ պատճառը պատերազմի հետևանքով առաջացած անվտանգային միջավայրն էր: 2020թ. նոյեմբերի 9-ի Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքված պայմանագրով հայկական ուժերը դուրս եկան ՀՀ-ի և Արցախի միջև ընկած ազատագրված տարածքներից և ՀՀ – Ադրբեջան սահմանը սկսեց անցնել Սյունիք, Վայոց ձոր, Գեղարքունիք և Տավուշ մարզերով, իսկ սահմանային բախումները և դաշտում աշխատող գյուղտեխնիկայի վրա կրակոցները դարձան հաճախակի: Սա ևս նպաստեց, որ հատկապես սահմանային դարձած բնակավայրերի բնակիչները աշխատանքի հնարավորություն փնտրեն ՌԴ-ում:

Ռուս-ուկրաինական պատերազմի և ՌԴ միգրացիոն օրենսդրության խստացումների ազդեցությունը ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրացիոն հոսքերի վրա

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը ներխուժեց Ուկրաինա: Այս իրադարձությանը հետևեցին ԵՄ-ի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցները: Դադարեցվեցին ՌԴ-ի հետ տնտեսական հարաբերությունները, արտահանում-ներմուծումը, անջատվեց SWIFT համակարգը, դադարեցվեց գազի և նավթի ներկրումը ՌԴ-ից, կտրուկ ընկավ ռուբլու կուրսը: Այս իրադարձություններն անշուշտ իրենց ազդեցությունն ունեցան ՀՀ-ից դեպի ՌԴ միգրացիոն հոսքերի վրա:

Աշխատանքային միգրացիայի արդյունքում արտերկրից դրամական փոխանցումները տարբեր տարիներին կազմել են ՀՀ ՀՆԱ-ի 10- 19%-ը (համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների, ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների շուրջ 60% -ը միշտ եղել է Ռուսաստանից)[20]՝ փաստացի աշխատանքային միգրացիան դարձնելով ՀՀ տնտեսության ոչ ֆորմալ ճյուղերից մեկը: 2023թ.-ին արտերկրից դրամական փոխանցումները կտրուկ նվազել են, անկախությունից ի վեր առաջին անգամ ՀՆԱ-ի համեմատ միանիշ թվով տոկոս ունենք՝ 7,2%: Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների, ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների շուրջ 70% -ը եղել է ՌԴ-ից[21]:

Չնայած նրան, որ ռուբլու կուրսը սանկցիաների արդյունքում ընկավ, այնուամենայնիվ այն որոշակի առումով իր գնողունակությունը պահպանեց ՌԴ-ում, իսկ ՀՀ ուղարկելու պարագայում այն խիստ արժեզրկված է հասնում, ուստի բազմաթիվ աշխատանքային միգրանտներ սկսել են ՌԴ տեղափոխել իրենց ընտանիքներին, քանի որ այլևս դժվարացել էր նույն աշխատավարձով ՌԴ-ում իր և ՀՀ-ում իր ընտանիքի կենսամիջոցներն ապահովելը: Այսպիսով կարճաժամկետ աշխատանքային միգրանտները դառնում են երկարաժամկետ կամ մշտական միգրանտներ: Սա պատճառներից մեկն է, թե ինչու են նվազել ՀՀ փոխանցվող դրամական հոսքերը:

Ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ ՀՀ մտնող դրամական միջոցների նվազման արդյունքում էականորեն սահմանափակվել են նաև ՀՀ մտնող գումարների ծախսման ոլորտները: Այդ գումարները բացառապես կենցաղային հարցերի լուծմանն

[20] https://www.cba.am/am/SitePages/Default.aspx
[21] https://www.cba.am/am/SitePages/Default.aspx

են ուղղված, նվազել է կրթության, առողջության, հանգստի վրա ծախսվող գումարի չափը, իսկ բիզնեսի կամ տնտեսության մեջ ներդնելու մասին խոսելն ավելորդ է:

Թվերի այս շարժը հիմնականում պայմանավորված է արտաքին գործոններով՝ ՌԴ միգրացիոն օրենսդրության խստացումները (2021-2024թթ), Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված սանկցիաները ՌԴ-ի նկատմամբ, որը խիստ բացասական ազդեցություն ունեցավ ՌԴ տնտեսության վրա, և ռուբլու կուրսի կտրուկ անկումը:

Սանկցիաների կիրառումը հատկապես ազդեց այն ոլորտների վրա, որտեղ աշխատում էին ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրանտները.

- ✓ շինարարություն, քանի որ գրեթե ամբողջ շինանյութը ներկրվում էր,
- ✓ ավտոմեքենաների նորոգում,
- ✓ ավտոբուսների տեխսպասարկում, քանի որ դադարեցվեց ոչ միայն ավտոմեքենաների, այլ նաև ավտոպահեստամասերի ներկրումը: ՀՀ քաղաքացիներ ներգրավված են նաև ավտոմեքենաների և ավտոբուսների նորոգման ոլորտում:

Սանկցիաներին եկան՝ լրացնելու ՌԴ օրենսդրության նոր խստացումները: Պետք է նշել, որ ՌԴ օրենսդրությունը 2015թ.ից սկսած պարբերաբար խստացվում է, 2021թ. նոյեմբերի 29-ին ուժի մեջ մտավ «Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» դաշնային օրենքում փոփոխություններ կատարելու մասին և «Ռուսաստանի Դաշնությունում պետական մատնահետքերի գրանցման մասին» թիվ 274 դաշնային օրենքը, որը սահմանում է ՌԴ տարածքում օտարերկրյա քաղաքացիների օրինական գտնվելու համար պարտադիր մատնահետքերի գրանցում, լուսանկարահանում և բժշկական զննում:

Այս փոփոխության արդյունքում 2 տարվա ընթացքում գրեթե կրկնապատկվեց ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը[22]:

Խստացումները շարունակվեցին նաև 2023 և 2024 թվականներին:

2019-2023թթ ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրանտների ամենամեծ թիվը եղել է 2021թ.-ին՝ աշխատելու նպատակով ՌԴ է մեկնել է **389 809** ՀՀ քաղաքացի, աշխատանքային կամ քաղ.իրավական պայմանագրով աշխատել է՝ **138 946** ՀՀ քաղաքացի (հետքովիդյան հետևանք): 2023-ին եղել է ամենափոքր թիվը. աշխատելու նպատակով ՌԴ է մեկնել է **234 541** ՀՀ քաղաքացի, աշխատանքային կամ քաղ.իրավական պայմանագրով աշխատել է **82 421** ՀՀ քաղաքացի[23] :

2023թ.-ի թվերը օբյեկտիվորեն կապված են Ռուս-ուկրաինական պատերազմի, ՌԴ-ի նկատմամբ սանկցիաների, ռուբլու կուրսի անկման և միգրացիոն օրենսդրության խստացման հետ:

2024թ. հուլիսի 23-ին ՌԴ Պետդուման ընդունեց «Ռուսաստանի Դաշնություն օտարերկրյա քաղաքացիների մուտքի (ելքի) և գտնվելու (բնակության) պայմանների մասին» օրենքում [24] փոփոխություններ, որոնք էական ազդեցություն են ունենալու ՀՀ-ից ՌԴ միգրացիոն հոսքերի վրա: Համաձայն այդ փոփոխության այսուհետ՝

1) Ռուսաստանում տարեկան գումարային 30 օրից ավել գտնվող միգրանտից կպահանջվի ստորագրել «Ռուսաստանին լոյալության համաձայնագիր»՝

---

[22] ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ՌԴ Միգրացիոն հարցերի գերատեսչությունից ստանում է ՌԴ մուտքի արգելք ունեցողների ցանկը՝ եռամսյակը մեկ 15-16 հզ. անձ

[23] ՌԴ ՆԳՆ տվյալների բազա

[24] https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_482512/3eeafbd3bdb64673818bd5cba64081209bddc7a4/

պարտավորություն ոչ միայն հետևելու է ռուսաստանյան օրենքներին, սովորույթներին ու ավանդույթներին, նաև ***չմիջամտել Ռուսաստանի Դաշնության պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց գործունեությանը***: Փաստացի միգրանտները զրկվելու են ՌԴ պետական ծառայողների կողմից իրենց իրավունքների ցանկացած խախտում օրինական կերպով բողոքարկելու իրավունքից:

2) Ներդրվում է «Վերահսկվող գտնվելու ռեժիմ», որը բաղկացած է միգրանտի պարտավորությունից՝ առանց ոստիկանության թույլտվության չլքել իր գրանցման վայրը, այսինքն տնից դուրս չաշխատել, չսովորել, և այլն: «Վերահսկվող գտնվելու ռեժիմ» կիրառվելու է այն միգրանտների նկատմամբ, ովքեր կասկածվում են

- ✓ **քրեական հանցագործություն կատարելու մեջ**,
- ✓ **միգրացիոն իրավախախտում կատարելու մեջ,**
- ✓ **վտանգավոր վարակիչ հիվանդությունների կրող լինելու մեջ**[25],
- ✓ **եթե միգրանտը գտնվում է հիվանդանոցում ստացիոնար բուժման համար**,
- ✓ և նաև այլ պատճառներով:

3) Ներդրվում է «Միգրացիոն հետախուզում» հասկացություն, որով ոստիկանությանը փաստացի իրավունք է տրվում որևէ կասկածանքով մինչև 48 ժամով կալանավորելու ցանկացած օտարերկրացու (ուժի մեջ կմտնի 2025թ. փետրվարի 5-ից):

4) Վարչական վտարման (արտաքսման) փոխարեն, որը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ իրական միգրացիոն իրավախախտումների համար, և ի հավելումն Ռուսաստանի 16 պետական տարբեր գերատեսչությունների կողմից ներկայումս կիրառվող մուտքի արգելքների, իրականացվելու է *վտարում ոստիկանության որոշումով (высылка)*, որի համար այլ հիմքեր, քան ոստիկանության որոշումն է, ընդհանրապես չի պահանջվելու:

5)Ներդրվում է վերահսկվող անձանց ռեեստր, որի մեջ ներառված օտարերկրացիների նկատմամբ իրականացվելու է իրավունքների արտադատական սահմանափակում, որով կարգելվի կազմակերպություններին (այդ թվում՝ պետական մարմիններին) այդ անձանց ցանկացած ծառայություն մատուցել: Նրանց կարգելվի տրանսպորտային միջոցներ վարել, վարորդական իրավունք ստանալ, անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ և ինքնագնաց մեքենաներ ձեռք բերել կամ օտարել, պետական մարմիններում գրանցել այդ գույքը, ինչպես նաև կարգելվի գրանցել ամուսնություն, գրանցվել բուհերում, քոլեջներում, դպրոցներում կրթություն ստանալու համար:

Ռուսաստանում օտարերկրյա քաղաքացիների գտնվելու (բնակության) նկատմամբ վարչական վերահսկողությունը, ըստ նոր փոփոխությունների, կլինի ոստիկանության գործառույթներից մեկը:

Ակտիվ քննարկվում են և առաջին ընթերցումն անցել են հետևյալ նախատեսվող փոփոխությունները՝

1) Բոլոր միգրանտների՝ ներառյալ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիների և նույնիսկ Ռուսաստանում բնակության թույլտվություն ունեցողների համար, կներդրվի արտոնագրին ձևաչափ ունեցող փաստաթուղթ, բայց շատ ավելի խտրական պայմաններով՝ **«Օտարերկրյա աշխատողների ռեեստր»,** որում գրանցումը վավեր է լինելու ընդամենը 1 տարի ժամկետով՝ ընդամենը 1 տարածաշրջանի համար և կոնկրետ 1 մասնագիտության ու պաշտոնի համար, որի համար պետք է միգրանտն

[25] հայտնի են հարյուրավոր կեղծ ախտորոշումների դեպքեր, պարտադիր բժշկական զննումների ժամանակ

իր հաշվին ռուսաց լեզվի թեստ հանձնի, անցնի բժշկական զննություն և մատնահետք հանձնի:

Այսպիսով, ո՛չ երկարաժամկետ աշխատանքային պայմանագրերը, ո՛չ կարիերայի աճը, ոչ էլ նույնիսկ գործուղումները հասանելի չեն դառնա միգրանտներին, իսկ աշխատանքի տարածաշրջանը փոխելիս բոլոր փաստաթղթերը նորից պետք է ձևակերպվեն: **Սա ուղղակիորեն հակասում է «Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին»:**

ԵԱՏՄ պայմանագրով սահմանվում է, որ աշխատանքային միգրանտների ներգրավումը աշխատանքի տեղավորման պետության գործատուների կողմից իրականացվում է առանց ազգային աշխատաշուկայի պաշտպանության նկատառումներով սահմանափակումների կիրառման, իսկ աշխատանքային միգրանտներից չի պահանջվում Կողմերի պետությունների տարածքներում աշխատանքային գործունեության իրականացման նպատակով թույլտվություն:

Փաստաթուղթը երկու հիմնական հարցի է առնչվում, որոնցով սահմանվում են այլ նորմեր, քան օտարերկրացիների համար ԵԱՏՄ անդամ պետություններում սահմանված նորմերն են: Դրանք են՝

ա) աշխատանքային միգրանտներից չի պահանջվում Կողմերի պետությունների տարածքներում աշխատանքային գործունեության իրականացման նպատակով թույլտվություն;

բ) աշխատող միգրանտները և նրանց ընտանիքի անդամները ազատվում են աշխատանքի տեղավորման՝ պետության իրավասու մարմիններում գրանցման/հաշվառման կանգնելուց աշխատանքի տեղավորման պետություն մուտք գործելու պահից 30 օրվա ընթացքում[26] (միգրացիոն հաշվառման պետք է կանգնել, եթե անձը պատրաստվում է 30 օրից ավելի գտնվել ՌԴ-ում):[27]

ԵԱՏՄ պայմանագրը սահմանում է աշխատանքային միգրանտների իրավունքներն ու պարտականությունները, մասնավորապես մասնագիտական աշխատանքով զբաղվելը, սոցիալական պաշտպանությունը, անհետաձգելի բժշկական օգնությունը, ունեցվածքի տնօրինումը, արհմիություններին անդամակցությունը:

2) Այդուհանդերձ, նույնիսկ «Օտարերկրյա աշխատողների ռեեստրում» հաջողությամբ գրանցված միգրանտին ռուս գործատուների համար գրեթե անհնար կլինի աշխատանքի ընդունել, քանի որ նրանք էլ պետք է գրանցվեն «**Օտարերկրացի աշխատողներ ներգրավող գործատուների միասնական ռեեստրում»**, որտեղ հանձնաժողովը (նշված չի ինչ հանձնաժողով), ինչ-որ չափանիշներով, ինչ-որ ժամկետում ներկայացնելու է հատուկ թափուր աշխատատեղեր միգրանտների համար՝ կոնկրետ մասնագիտություններով, կոնկրետ քաղաքացիությամբ և որոշակի աշխատավարձով, 1 տարուց ոչ ավելի գործողության ժամկետով:

Գործատուն, որն ընդգրկված կլինի այս «Օտարերկրացի աշխատողներ ներգրավող գործատուների միասնական ռեեստրում», եթե կնքի աշխատանքային պայմանագիր օտարերկրացու հետ, պետք է նախապես վճարի բոլոր հարկերը յուրաքանչյուր միգրանտի համար առնվազն մեկ ամիս առաջ՝ դեռ չաշխատած ժամանակի և դեռ չստացված եկամտի համար:

---

[26] 30 օրից ավելի մնալու պարագայում պարտավոր են 30-րդ օրը ունենալ միգրացիոն հաշվառում, հակառակ դեպքում, կարող են հայտնվել անօրինական միգրանտի կարգավիճակում: Հեղ.

[27] Ոչ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները միգրացիոն հաշվառման տետք է կանգնեն մուտքի պահից սկսած 7 աշխատանքային օրվա ընթացքում:

Ակնհայտ է, որ գործատուները պարզապես չեն կատարի այդ պահանջները և առանց աշխատանքային պայմանագրի աշխատանքի կընդունեն միգրանտներին, նրանց մշտապես արտաքսման («վարչական վտարման») վտանգի տակ դնելով, իսկ իրենք՝ կաշառք վճարելով:

3) Օտարերկրացիների համար կստեղծվի թվային պրոֆիլ, որը կմիավորի քաղաքացու մասին պետական մարմինների և կազմակերպությունների տեղեկատվական համակարգերում առկա տվյալները: Բացի այդ, կներդրվի Ռուսաստանում օտարերկրյա քաղաքացու ինքնությունը հաստատող մեկ միասնական փաստաթուղթ: Այն կփոխարինի բոլոր տրված միգրացիոն փաստաթղթերին, որոնք հաստատում են երկրում ապրելու և աշխատելու իրավունքը: Այս փաստաթուղթը պետք է ստանա յուրաքանչյուր միգրանտ, ով ցանկանում է Ռուսաստանում մնալ տարեկան գումարային 30 օր և ավելի ժամկետով: Այդ փաստաթուղթը պետք է պարունակի միգրանտի մասին բոլոր տեղեկությունները՝ անձնագրի տվյալները, հասցեն և գրանցման ժամկետը, աշխատանքի թույլտվությունը և աշխատանքային պայմանագիրը, միգրանտի համար վճարված հարկերը և առողջության մասին տեղեկատվությունը: Բոլոր տվյալները լինելու են փաստաթղթի չիպի վրա, որին հասանելիություն կունենա միայն ոստիկանության աշխատակիցը[28]:

2023թ. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) բնակչության բռնի տեղահանումը, արցախցիների միգրացիոն տրամադրությունները

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանի կողմից ապօրինի արգելափակվեց Լաչինի միջանցքը և սահմանափակվեց Լեռնային Ղարաբաղի բնակիչների ազատ տեղաշարժի իրավունքը, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակիչները զրկվեցին իրենց մշտական բնակության երկիր վերադառնալու հնարավորությունից: 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացվեց ռազմական հարձակում, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը բռնի տեղահանվեց իր մշտական բնակության երկրից: Նրանք գաղթեցին Հայաստանի Հանրապետության տարածք:

Հաշվի առնելով, որ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական ագրեսիայի արդյունքում թիրախավորվել են նաև Լեռնային Ղարաբաղի բնակավայրերը և այնտեղ բնակվող խաղաղ բնակչությունը, նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի բացահայտ ագրեսիան և լայնածավալ ռազմական գործողությունները հանգեցրել են տասնյակ հազարավոր զոհերի և զգալի նյութական կորուստների, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչները բռնի տեղահանվել են իրենց մշտական բնակության երկրից համատարած բռնության և բռնության իրական սպառնալիքի, արտաքին հարձակման, միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների զանգվածային խախտումների, հասարակական կարգը խախտող իրադարձությունների, Ադրբեջանի հայատյաց, Լեռնային Ղարաբաղի ժողովրդին էթնիկ զտման ենթարկելու քաղաքականության պատճառով, և Լեռնային Ղարաբաղի բնակիչները հնարավորություն չունեն ներկայումս վերադառնալու իրենց մշտական բնակության

[28] Մոսկվայում այն արդեն կիրառվում է պատենտով աշխատող օտարերկրացիների համար

երկիր, նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղում բնիկ հայ ժողովրդի անվտանգության ապահովման միջազգային երաշխիքների բացակայությունը, ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց նրանց **ժամանակավոր պաշտպանության տակ վերցնել և տրամադրել փախստականի կարգավիճակ**:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականների թիվը կազմում է շուրջ 115 359 անձ: 2023թ. սեպտեմբերից մինչև 2024թ. ապրիլի 1-ը ըստ ՀՀ ԱԱԾ-ի՝ Հայաստանից մեկնել է Արցախի հաշվառում ունեցող 15 162 անձ, իսկ վերադարձել՝ 6 062-ը:[29]

Նրանք հիմնականում մեկնել են ՌԴ, քանի որ ԵՄ երկրների դեսպանությունները հակված չեն շենգեն վիզա տրամադրելու Արցախից տեղահանվածներին, քանի որ ունեն մտավախություն, որ նրանք ԵՄ երկրներ հասնելուն պես ապաստան կհայցեն: Մյուս կողմից արցախցիները ամուր տնտեսական և ազգակցական կապեր ունեն ՌԴ-ում և հաճախ մեկնում են հարազատների, բարեկամների մոտ, մի մասն էլ ունի ՌԴ քաղաքացիություն:

Արցախից տեղահանվածների անձնագիրը, քանի որ նույն ՀՀ քաղաքացու անձնագիրն է, միայն 070 ծածկագրով, ուստի ՌԴ Միգրացիոն հարցերի գերատեսչության տարածքային կենտրոնի աշխատակիցները առանձնապես չեն տարբերում փաստաթուղթը և նրանց վերաբերվում են ինչպես ՀՀ քաղաքացիներին: Այսինքն միգրացիոն հաշվառումն անում են ինչպես ԵԱՏՄ անդամ երկրի քաղաքացիներին՝ 30 օրվա ընթացքում և բնակությունը համարում են օրինական աշխատանքային կամ քաղ.իրավական պայմանագրի կնքման դեպքում: Ինչպես կփոխվի ՌԴ քաղաքականությունը նրանց նկատմամբ, դժվար է ասել, դեռևս նրանք օգտվում են վերոնշյալ կարգավորումներից:

Արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների հետ հարցումների արդյունքները

Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի «Ռուսաստանի, Հայաստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի միջև աշխատանքային միգրացիայի հարցերով մասնագիտացած հասարակական կազմակերպությունների անդրազգային ցանցի միավորում» ծրագրի շրջանակներում ՌԴ արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիներին տրամադրվում է նախամեկնումային և ՌԴ օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն: Անշուշտ շատ կարևոր էր թիրախ խմբերից պարզել ինչ խնդիրների են հանդիպում ՌԴ-ում, ուստի խորհրդատվություն ստացածների շրջանում իրականացվեց հարցում: Հարցմանը մասնակցել են խորհրդատվություն ստացած 33 անձ: Նրանցից 20-ը եղել է տղամարդ, 13-ը՝ կին, 29-ը՝ միգրանտ, 4-ը՝ ընտանիքի անդամ: 15-ը մեկնել էին միայնակ, 18-ը՝ ընտանիքի հետ: Բաշխվածություն ըստ մարզերի. 8-ը՝ Շիրակի մարզից, 7-ը՝ Երևանից, 4-ը՝ Լոռու մարզից, 2-ական

[29] https://www.civilnet.am/news/771779/%D6%84%D5%A1%D5%B6%D5%AB%D5%9E-%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D6%81%D5%AB-%D5%A7-%D5%B0%D5%A5%D5%BC%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81-%D5%BD%D5%A5%D5%BA%D5%BF%D5%A5%D5%B4%D5%A2%D5%A5%D6%80%D5%AB%D6%81-%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B9-%D6%85%D6%80%D5%BD/

մասնակից եղել է Արագածոտն և Վայոց ձոր մարզերից, 1-ական՝ Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք մարզերից, 1-ը Արցախից, 4-ը չի նշել մարզը:



Հարցվածները հիմնականում աշխատել են սպասարկման (31%), ծառայությունների (21%) և շինարարության (21%) ոլորտներում:



Երբվանից եք մեկնում ՌԴ հարցին պատասխանել են՝ 2010-2019թթ. միջակայքում 21 անձ, 2020-2024թթ.՝ 7 անձ, 2000-2009թթ.՝ 3 անձ, 1990թ.-ից՝ 1 անձ, 1984թ.-ից՝ 1 անձ:



Հարցվածների 27%-ը մեկնում է Մոսկվա, 12%-ը՝ Սանկտ Պետերբուրգ:



Հարցվածներից որևէ մեկը Ուկրաինայում աշխատելու առաջարկ չի ստացել: Պատերազմն սկսվելուց հետո որոշակի ժամանակահատված բանկով դրամական միջոցներ ուղարկելու խնդիր են ունեցել, հիմա հիմնականում չունեն, որոշները կանխիկ են բերում իրենց գումարները, մեծ մասն օգտվում են փոխանցումների տարբեր համակարգերից՝ Unistream, Золотая корона, ID pay, Сбербанк on-line: Հիմնական դժգոհությունը ռուբլու կուրսի նվազումն է:

33%-ը մտադիր է մնալ ՀՀ-ում, 9%-ը դեռ չգիտի կմնա ՀՀ-ում, թե ՌԴ-ում, 3%-ն արտաքսում ունի, բայց բողոքարկել է, ցանկանում են ամեն գնով վերադառնալ ՌԴ, 55%-ը մտադրություն ունի մնալ ՌԴ-ում, հիմնականում ընտանիքով մեկնածներն են:

Հարցվածների 60%-ը օրենքների հետ կապված խնդիրներ չի ունեցել ՌԴ-ում, դիմել էին իրավական խորհրդատվության կամ նոր փոփոխությունների մասին տեղեկանալու համար: 40%-ը հանդիպել են տարբեր խնդիրների ու դժվարությունների, ինչպիսիք են՝

- Բուժզննում չի անցել, քանի որ տեղյակ չի եղել նոր օրենքի մասին՝ մուտքի արգելք ունի,
- ՌԴ մուտք գործելուց հետո հաշվառում է արել roc.услуги կայքի միջոցով, բայց հետո գնացել պարզել է, որ բազայում չկա անունը. հարցը դեռ լուծված չէ,
- ՀՀ անձնագրում ելքի կնիքի ժամկետն անցել էր, 2024թ. հունվարի 1-ից հետո ռեգիստրացիա չեն արել,
- Մասնավոր այցի նպատակը ցանկացել է փոխել աշխատանքի, դիմել է, բայց ձգձգել են, ստիպված սահման է հատել,
- Երեխային 1 տարուց ավելի չի կարողացել դպրոց ուղարկի, քանի որ դպրոցները չէին ընդունում, պատճառաբանում էին, որ տեղ չկա,
- Տուգանել են ՀՀ վարորդական իրավունքով աշխատելու համար:

Ամփոփում

ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրանտները խիստ անպաշտպան են, նրանց խախտված իրավունքների վերականգնմամբ զբաղվում են բացառապես իրավապաշտպանները և ՀԿ-ները: ՀՀ-ից մեկնող ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների խնդիրներով որևէ պետական մարմին չի զբաղվում:

44-օրյա պատերազմից և Արցախի կորստից հետո սահմանամերձ բնակավայրերի թիվը կտրուկ աճել է: Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերի բազմաթիվ գյուղերի բնակիչներ չեն կարողանում զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, քանի որ դաշտ դուրս գալիս ադրբեջանցիները կրակում են գյուղտեխնիկայի վրա: Այս մարդիկ իրենց ապրուստը հոգալու համար ստիպված են կամ աշխատանք գտնել Երևանում և երևանամերձ համայնքներում կամ մեկնել ՌԴ՝ աշխատանքային միգրացիայի:

Գաղտնիք չէ, որ ՀՀ գործատուների 90% տեղակայված են Երևանում և երևանամերձ մարզերում, սա էականորեն ազդում է հատկապես սահմանամերձ համայնքներից դեպի Երևան աշխատուժի հոսքի վրա: Մյուս կողմից, իմիգրացիոն հոսքերի և Արցախի բնակչության տեղահանությունից հետո Երևանում և հարակից մարզերում կտրուկ բարձրացել է բնակարանների վարձակալության գինը, ինչը բերել է նրան, որ սահմանամերձ, հեռավոր մարզերի բնակիչները, որոնք չեն կարող ամեն օր գալ Երևան աշխատելու, ուղղակի չեն կարող իրենց աշխատավարձով և՛ բնակարան վարձել, և՛ իրենց ընտանիքիների հոգսերը հոգալ, ուստի գերադասում են մեկնել ՌԴ: Հնդկաստանից էժան աշխատուժի ներհոսքը բերել է գործատուների կողմից աշխատավարձի դեմփինգի և սա ևս նպաստել է, որպեսզի այս մարդիկ մեկնեն ՌԴ աշխատելու:

Արդեն իսկ նկատվում է տենդենց նաև Արցախից տեղահանվածների կողմից ՌԴ մեկնելու աշխատելու, ապրելու համար: Մեկնողների մեջ քիչ չեն նրանք, ովքեր ցանկանում են ձեռք բերել ՌԴ քաղաքացիություն[30]:

Չնայած պատերազմներին, սանկցիաներին և այլ խոչընդոտներին ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրացիոն հոսքերի հիմնական երկիրը շարունակում է մնալ ՌԴ-ն: Անշուշտ հեշտ չէ աշխատանքային միգրանտների կյանքը ՌԴ-ում, չնայած ԵԱՏՄ անդամ լինելուն, ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրանտները հանդիպում են այնպիսի դժվարությունների, որոնց ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները չպետք է հանդիպեն, քանի որ այդ մասին կամ նշված է ԵԱՏՄ պայմանագրում, կամ ընդունված օրենքներում նշված են ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները, որպես բացառություն: Հատկապես 2023-2024թթ. նկատվում է վերաբերմունքի խստացում:

Չնայած ԵԱՏՄ պայմանագրում անդամ երկրների ընտանիքի անդամների իրավունքների մեջ նշված է նաև դպրոցներում անարգել սովորելու դրույթը, այնուամենայնիվ դպրոցները խոչընդոտներ են առաջացնում, երեխաներին դպրոց ընդունելու վերաբերյալ՝ պատճառաբանելով տեղերի բացակայությունը:

2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիների համար առանց սահման հատելու միգրացիոն քարտում այցի նպատակը փոխելու մասին փոփոխությունը: Միգրացիոն ծառայությունների աշխատակիցները ձգձգում են փոփոխումը, մինչև որ միգրանտը ստիպված է լինում սահման հատել, որ միգրացիոն քարտում այցի նպատակը նշի՝ Աշխատանք, որպեսզի կարողանա աշխատել և այդ հիմքով երկարացնի իր ՌԴ-ում օրինական գտնվելը:

ՌԴ օրենսդրության 2025թ.-ին սպասվող խստացումները կարող են հանգեցնել մեծ թվով միգրանտների անօրինական կարգավիճակում հայտնվելուն և արտաքսումների ու մուտքի արգելքների կտրուկ աճի:

Գրեթե անհնար կդառնա ՌԴ-ում միգրանտների կողմից իրենց իրավունքների պաշտպանությունը:

Ներկայումս միգրանտները կարող են դիմել դատարան և փաստաթղթերով ապացուցել, որ իրենց ապօրինի են տուգանել, կամ խախտվել են իրենց իրավունքները, իսկ 2025թ.-ից, երբ նոր փոփոխություններն ուժի մեջ մտնեն նրանք ուղղակի կկորցնեն իրենց իրավացիությունը փաստաթղթերով ապացուցելու հնարավորությունը:

ՀՀ-ից աշխատանքային էմիգրացիոն հոսքերի դիվերսիֆիկացիայի հարցը հրատապ լուծման կարիք ունի: Անհնար կլինի մի քանի ամսում ՀՀ-ում ստեղծել աշխատանքային միգրանտների համար աշխատատեղեր, որպեսզի նրանք մնան և աշխատեն ՀՀ-ում: Միշտ լինելու են արտագնա աշխատանքի մեկնելու պատրաստ անձնինք:

Մինչ օրս աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ՀՀ-ի կողմից կնքված միջպետական պայմանագրերից և համաձայնագրերից միակ գործող փաստաթուղթը ԵԱՏՄ համաձայնագիրն է: Շատ կարևոր է այս դաշտում արագ քայլեր կատարել՝ ուսումնասիրելով այլ, մեզ նման երկրների փորձը:

---

[30] Երբ ՀՀ-ում ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի կարգավիճակ ունեցող մինչև 55 տարեկան արցախցի տղամարդը ձեռք է բերում ՌԴ քաղաքացիություն, դադարում է նրա փախստականի կարգավիճակը: Երբ նա հրաժարվում է ՌԴ-ում զինվորական հաշվառման կանգնել, ՌԴ քաղաքացիության մասին օրենքով նրան զրկում են քաղաքացիությունից և փաստորեն նա դառնում է քաղաքացիություն չունեցող անձ՝ կորցնելով որևէ պետության կողմից իրեն պաշտպանելու հնարավորությունը:

Առաջարկություններ

1) Ունենալ աշխատանքային կցորդներ կամ աշխատանքային միգրանտների իրավունքներով զբաղվող ներկայացուցիչներ այն երկրներում, որտեղ կլինեն առավել մեծ քանակի աշխատանքային միգրանտներ և զբաղվել աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանությամբ՝ ՀՀ-ից դուրս:

2) Դիվերսիֆիկացնել և կառավարել ՀՀ-ից մեկնող աշխատանքային միգրացիոն հոսքերը: Օրինակ՝ Ղրղզստանի[31] կամ Ուզբեկստանի[32] նման կնքել միջպետական պայմանագրեր աշխատուժի կարիք ունեցող եվրոպական կամ ասիական զարգացած երկրների հետ, կազմակերպել մասնագիտական վերապատրաստման կամ վերաորակավորման դասընթացներ, ճանաչել միմյանց կողմից տրված մասնագիտական սերտիֆիկատները, կազմակերպել լեզվի դասընթացներ և այլն՝ նվազեցնելով ՌԴ-ից գրեթե 100% կախվածությունը:

3) Կամ պետության հսկողության ապահովման պայմաններում մասնավոր աշխատանքի տեղավորման գործակալություններին, որոնք ավելի ճկուն են, հնարավորություն տալ գտնել արտերկրում գործատուներ և միջնորդ հանդիսանալ ՀՀ-ից աշխատուժի և արտերկրում գտնվող գործատուի միջև:

4) Մշակել մեխանիզմներ ազգային աշխատաշուկան պաշտպանելու համար: Օրինակ՝այլ հավասար պայմաններում, եթե գործատուն պետք է աշխատանքի վերցնի օտարերկրացուն, ապա օրենքով ստիպված լինի օտարերկրացու համար վճարել ավելի շատ հարկեր (այս դեպքում գործատուն կմտածի ՀՀ քաղաքացուն մերժելիս):

[31] https://migrant.kg/ru/services/country/

[32] https://mehnat.uz/ru

Հավելված

ՌԴ և ՀՀ աշխատանքային միգրացիան կարգավորող միջազգային և ազգային օրենսդրական փաստաթղթերը

ՌԴ Սահմանադրություն

Միջազգային պայմանագրեր՝

- Ռուսաստանի Դաշնության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի քաղաքացիների համար առանց վիզայի ռեժիմի ճանապարհորդության մասին 1997 թվականի հունվարի 16-ի համաձայնագիր;
- 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագիր Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության, Ղրղզստանի Հանրապետության կառավարության, Ռուսաստանի Դաշնության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև փոխադարձ վիզայի ազատության մասին. քաղաքացիների ճանապարհորդություն;
- «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների ազատ տեղաշարժի, բնակության վայրի և բնակության վայրի ընտրության իրավունքի մասին Ռուսաստանի Դաշնության տարածքում» 1993 թվականի հունիսի 25-ի թիվ 5242-I դաշնային օրենքը;
- «Ռուսաստանի Դաշնությունից դուրս գալու և Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելու կարգի մասին» դաշնային օրենքը 1996 թվականի օգոստոսի 15-ի № 114-ԴՕ;
- «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիության մասին» դաշնային օրենքը 2023 թվականի ապրիլի 28-ի N 138- ԴՕ;
- «Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» դաշնային օրենքը 2002 թվականի հուլիսի 25-ի N 115-ԴՕ;
- «Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Ռուսաստանի Դաշնությունում միգրացիոն գրանցման մասին» դաշնային օրենքը 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 109 -ԴՕ:

Ի լրումն դրանց ընդունվել են նաև հետևյալ ենթաօրենսդրական ակտերը՝

- Ռուսաստանի Դաշնության Կառավարության 2003 թվականի մարտի 24-ի թիվ 167 որոշումը «Ռուսաստանի Դաշնությունում գտնվելու ընթացքում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց նյութական, բժշկական և բնակարանային աջակցության երաշխիքների տրամադրման կարգի մասին»;
- Ռուսաստանի Դաշնության Կառավարության 2004 թվականի օգոստոսի 16-ի թիվ 413 որոշումը (փոփոխվել է 2006 թվականի մայիսի 6-ին) «Միգրացիոն քարտի մասին»:

ՀՀ միգրացիոն օրենսդրության հիմքը կազմում են՝

ՀՀ Սահմանադրությունը

ՀՀ-ի կողմից ստորագրված Միջազգային փաստաթղթերը՝

- Աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա (1990);
- Արձանագրություններ մարդկանց առևտրի և միգրանտների անօրինական տեղափոխման դեմ (2000);
- «Զբաղվածության համար միգրացիայի մասին» 1949 թ.-ի թիվ 97 վերանայված ԱՄԿ կոնվենցիան (կից հայտարարությամբ);
- Անօրինական միգրացիայի դեմ պայքարի մասին կոնվենցիան;
- «Միգրացիայի բնագավառում չարաշահումների և աշխատող միգրանտներին հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության ապահովման մասին» 1975թ.-ի թիվ 143 կոնվենցիան;
- «Անօրինական միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիր (1998 թ. Մարտի 6);
- «ԱՊՀ մասնակից պետությունների աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավական կարգավիճակի մասին կոնվենցիա» (2008 թ. նոյեմբերի 14);
- «ՀՀ և ՌԴ միջև Ռուսաստանի Դաշնության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող ՌԴ քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» պայմանագիր- 1998թ.:

Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ՝

2014թ. մայիսի 29-ին կնքվել է **Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը**[33]**,** որն ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ից: Անդամ երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը:

Պայմանագրի XXVI բաժինը կոչվում է «Աշխատանքային միգրացիա» և նրա 3 հոդվածները վերաբերվում են միայն և բացառապես աշխատանքային միգրանտներին և նրանց ընտանիքի անդամներին:

Հոդված 96. Աշխատանքային միգրացիայի ոլորտում անդամ պետությունների համագործակցությունը:

Հոդված 97. Անդամ պետությունների աշխատավորների աշխատանքային գործունեությունը:

Հոդված 98. Անդամ պետության աշխատավորի իրավունքները և պարտականությունները:

2016թ. հոկտեմբերի 27-ին ստորագրվել է **«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության միջև միգրացիոն գործընկերության վերաբերյալ»** համաձայնագիրը:

Համաձայնագրի նպատակն է զարգացնել Հայաստանի և Ֆրանսիայի միջև համագործակցությունը և գործընկերությունը միգրացիայի բնագավառում:

---

[33] https://docs.eaeunion.org/Pages/DisplayDocument.aspx?s=bef9c798-3978-42f3-9ef2-d0fb3d53b75f&w=632c7868-4ee2-4b21-bc64-1995328e6ef3&l=540294ae-c3c9-4511-9bf8-aaf5d6e0d169&EntityID=3610

Համաձայնագրով սահմանվում են ուսանողների, երիտասարդ մասնագետների, որակավորված մասնագետների տեղաշարժերի ընթացակարգերը, աշխատանքի նպատակով կացության քարտի տրամադրումը, սոցիալական և տնտեսական վերաինտեգրումը, անօրինական ներգաղթի դեմ պայքարի ոլորտում համագործակցությունը:
Հայկական կողմը վավերացրել է համաձայնագիրը, իսկ ֆրանսիական կողմը դեռևս ոչ:
2018 թվականի փետրվարի 12-ին ստորագրվել է **«Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին»** համաձայնագիրը[34]:
Համաձայնագիրը վերաբերվում է աշխատողների այն կատեգորիաներին, ովքեր համաձայնագրի շրջանակներում կնքել են աշխատանքային պայմանագիր և ում տրամադրվել է կացության թույլտվություն՝
ա) աշխատողներ՝ մեկ տարի սկզբնական ժամկետով՝ մինչև ընդհանուր երեք տարի ժամկետով հետագա երկարաձգման հնարավորությամբ,
բ) սեզոնային աշխատողներ՝ յուրաքանչյուր տարի ոչ ավել, քան ինը ամիս ժամկետով:
Համաձայնագրի շրջանակներում մյուս կողմի տարածքում ՀՀ և ԲՀ քաղաքացիների մուտքի, գտնվելու և զբաղվածության հետ կապված հարցերը կարգավորվում են ընդունող կողմի ներպետական օրենսդրությամբ:
Աշխատանքային միգրանտներին կարող են ուղեկցել նրանց ընտանիքի անդամները՝ համաձայն ընդունող կողմի ներպետական օրենսդրության:
Քննարկվող՝

- ✓ 2010թ. քննարկվում էր «Քաթարի տարածքում աշխատուժի օգտագործման մասին» համաձայնագիր;
- ✓ 2022թ.-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների Կառավարության միջև աշխատուժի օգտագործման մասին» փոխըմբռնման հուշագրի կնքմանը:

Աշխատանքային միգրացիայի ազգային օրենսդրություն

- ՀՀ Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը-2021;
- «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենք -1995;
- «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք- 2007

Ենթաօրենսդրական ակտեր
ՀՀ կառավարության N 670-Լ «Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագիրը հաստատելու մասին» որոշումը:

[34] http://www.parliament.am/draft_docs6/K-353_hamadzaynagir.pdf